

ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«Кавказский Вѣстникъ», օգոստոս, Շարունակում ենք քաղուածքներ բերել պ. Քամաճեանի յօդուածից՝ Լուդովիկ զը Կօնստանստնի Վերիստոնեաներ և Մուսիլմաններ» զրբի մասին (ՎՄուրճ № 8)։

Քնելով գիշերուայ ժամի 2-ին, ճանապարհորդները դարձնում են մի աղմկալի և խիստ վիճաբանութիւնից, որ տեղի ունէր նրանցից ոչ հեռու. աղմուկը լետոյ հանդարտուեց։ Վեր խոհարարը, մի հայ, հաղորդեց մեզ թէ վեճը այն մասին էր՝ պէ՞տք էր մեզ կողոպտել թէ ոչ։ Մի քանիսն արի կարծիքով մենք ճանապարհորդող վաճառականներ չէինք, այլ լրտեսներ, որոնք եկել են երկիրը ուսումնասիրելու և որոնց անպատճառ պէտք է ոչնչացնելու։ Քարերախտաբար, չափաւոր կարծիքների ձայնը լաղթող է հանդիսանում և ճանապարհորդներին չեն կողոպտում։

Մենք մօտենում էինք Եղեսիային ոչ առանց ծանր զգացմունքի։ Քիչ առաջ քաղաքը 8000 հայերի կոտորածի թատրոն էր դարձել։ Անցնելով ամալի սարերը, որոնք տիրապետում են Եղեսիայի արեւմտեան կողմից, նեղ բնական դռներով մենք մտանք մի անձուկ կիրճի մէջ, որ ասորիճանաբար իջնում էր դէպի այն հովիտը, որ տարածուած է քաղաքը։ Մինչև կոտորածները Եղեսիայի մէջ 21,000 հայեր կային։ Նրանք համարեա ամբողջովին կենարոնացած են մի առանձին թաղի մէջ, որ բռնում է քաղաքի $\frac{1}{3}$ մասը

և և երկու կողմից շրջապատուած է պատերով։ Թիւրք զինուորները, որոնք կատարում են ոստիկանութեան դերը, պահպանում են հայոց թաղից դէպի թիւրքաց թաղը տանող ճանապարհները։ Հայերը այստեղ պարսպում էին մանր բրդիւնագործութեամբ. ունենալով քաղաքի շրջակայքում հողեր, նրանք անձամբ մշակում էին նրանց կամ վարձով տալիս էին հայ և թիւրք գիւղացիներին։ Քիւրդ և արաբ հովիւները ծախում էին հայ վաճառականներին իրանց ահագին հօտերից ստացած բուրդը։ Հայէպի վաճառականները բրդի բազմաթիւ կարաւաններ էին ուղարկում Նիւքսանդրէտ Թիւրքերի և հայերի մէջ յարաբերութիւնները բարեկամական էին, մուսիլման ընտանիքները այցելում էին հայերի տներ. թիւրքերը և հայերը հաւասար չափով տանջւում էին պաշտօնեաների կամայականութիւնից։ Նյդ բոլորից այժմ միայն չիղողութիւն է մնացել։ շուկայում փակուած են մնում հայերի կողոպտուած խանութները։ Քրիստոնեաներն ու մուսիլմանները այլ ևս միմեանցից օչինչ չեն գնում։ Ծանր աղքատութիւն է տիրում քաղաքում. վախեցած, կեղեքուած հայերը չեն հեռանում իրանց տներից և ընտանիքները ամբողջ ամիսներով փակուած են վարակուած տներում. սաստիկ ցնցումները, որոնց ենթարկուած էին նրանք, շատ հիւանդութիւններ են զարգացրել նրանց մէջ։ Դժբախտ քաղաքը

աշխարհն մոռացուած էր Աստուծու և մարդկանց կողմից, որ վերջին 18 ամիսներու մէնք համարեա միակ եւրոպացիներն էինք, որ այցելում էինք Նդեախան Գրիստոնեաները ասում էին որ մեր գալուստը մահմեդականների կասկածն է գրգռել: Նրանց համար իւրաքանչիւր եւրոպացի երևան է գալիս իբրև վրէժ-խնդիր աշխարհորոշութիւնների համար, որ նրանք կատարեցին անպաշտպան ազգաբնակութեան զըլխին:

Նդեախայում երկու անգամ եղաւ հայերի կոտորած. 1895 թուի հոկտեմբերին և նոյն տարուայ դեկտեմբերի վերջում: Առաջին կոտորածը, ըստ թիւրքական հասկացողութեան, անշնորհք կերպով էր կազմակերպուած և այդ պատճառով իշխանութիւնները ջանք էին անում կոտորածի առաջն առնել: Լսելով աշխարհայեցողների մասին, որոնք տեղի էին ունենում Հայաստանի զանազան կողմերում, շրջակայ քիւրդերն ու արաբները, զրաւում աստիճանութեան մտքով, մօտեցան քաղաքին, ուր սպասելով մօտ երեք շաբաթ և ձանձրանալով անգործութիւնից, վճռեցին մօտ 60 քաղաք և սկսել թալանը. մօտ 60 հայեր սպանուեցան, բայց չափը տակոյնները շուտով դադարեցին որ և է զանազանութիւն գնելուց հալի և մահմեդականի մէջ և սկսեցին կողոպտել նաև թիւրքերին: Վառաժարութիւնը, տեսնելով որ գործը ցանկալի ընթացք չէ ստանում, կարգադրեց հեռացնել կողոպտողներին:

Անցաւ մօտ երկու ամիս. հայերը, համոզուած լինելով որ անկարգութիւններն ու կոտորածները պիտի կրկնուեն, չէին վստահանում դուրս գալ տներից և պատրաստում էին ինքնապաշտպանութեան: Այստեղ թիւրք վարչութիւնը ամենապրզովեցուցիչ և խարդախ կեր-

պով վարուեց. հանդիսաւոր կերպով խոտանալով հայերին թէ նրանց այլ ևս անհանգստութիւն չեն պատճառի, վարչութիւնը պահանջում էր հայերից յանձնել իրանց զէնքերը և հայ եպիսկոպոսը հոգեորականութեան հետ սկսեց տնէ տուն շրջել, հաւաքելով իր հօտի զէնքերը: Թիւրք իշխանութեան յանձնելու համար, Հայերը աշխուժեցան զգուշ էին. նրանց հասնում էին լուրեր Վիարբեքիւրի, Խարբերտի, Այնթաքի, Մարաշի կոտորածների մասին և նրանք չէին վստահանում թողնել իրանց տները: Թիւրք վարչութիւնը համոզում էր նրանց չը վախենալ թէ կը լինեն յարձակումներ, հրախուսում էր նրանց ջուր վերցնել հասարակական աղբիւններից և յայտարարեց թէ քրիստոնեաներին պաշտպանելու համար ինքը պահանջել է Հալէպից մի բատալիօն ընդիֆ զօրք: Հայերը, ենթադրելով վերջապէս թէ փոթորիկն անցաւ, վճռեցին դուրս գալ տներից: Հասաւ դեկտեմբերի 28-ը. նոր տեղ հասած մի բատալիօն զօրք սկսեց շրջապատել հայերի թաղը և փակել միւս թաղերը տանող ճանապարհները: Միւս բատալիօնը, որ վաղուց ապրում էր Նդեախայում և ծանօթ էր հայոց թաղի տեղադրութեան, մասերի բաժանուեց և իւրաքանչիւր մասին յանձնարարուեց կոտորել հայերին: Վէժօրին մուէզդիները սկսեցին կանչել ժողովուրդը աղօթքի և մի և նոյն ժա. մանակ զօրքերը, բնակիչների հետ միասին, որոնք պիտի օգնէին նըրանց, խուժեցին հայոց թաղի վրայ: Խիստ հրաման էր արձակուած նախ կոտորել, որքան կարելի է շուտ և արագ: Կողոպտուող և հարստահարութիւնը խոտացուած էին յետոյ: Արեւ մայր մտնելուն պէս, զինուորական փողը նշան տուեց դադարեցնել կոտորածը, որպէս զի նա վերանորոգուի միւս օրը նոր ոյժով:

Սարափից խելքը կորցրած հայ ազգաբնակիչները սկսեց փրկութիւն որոնել մայր եկեղեցում. մեծ խմբերով աչնտեղ թափուեցան կանայք, երեխաներ, ծերեր և մօտ 2000 մարդկանցով լցուեց եկեղեցին. բայց Աստուծու տաճարն էլ չը խնայուեց և միւս օրը մահմեդականները թափուեցին աչնտեղ. կշտանալով սպանութիւններից, հարստահարութիւնից, կողոպուտից, նրանք ըսկըսեցին նախ ամէլ քրիստոնեաների վրայ և վառել նրանց. շուտով մարդկային մարմինների մի սոսկալի խարոյկ սկսեց այրուել մայր եկեղեցում:

Հեղինակը ուշադրութիւն է դարձնում որ կոտորածներից չետոյ բողոքականութիւնը սկսել է սաստիկ տարածուել հայերի մէջ. Եղեւսիայում 500 ընտանիք բողոքականութիւն են ընդունել: Բողոքականութեան դարգացումը ուժեղացնում է հայ ազգաբնակչութեան մէջ մի տարր, որ ընդունակ է դատելու և հարկատր դէպքում գործել քաղաքական նպատակներով. նա դարգացնում է հայերի մէջ և մեզ, ֆրանսիացիներին համար անձեռնտու անգլիափրութիւնը:

Եղեւսիայից պ. Վոստանասոն ճանապարհուել է Բիրեջիկ. խօսելով նեստորականների և լակոբրիտների մասին, նա ապա յիշատակում է որ Բիրեջիկում կոտորուեցան 153 հայեր և կոտորածի ժամանակ զանազանութիւն չէր գնում լուսաւորչական, կաթողիկ և բողոքական հայերի մէջ. Վոստորողը մահմեդական ամբօրին էր, որին առաջնորդում էին երկու մօլլա. և զուցէ ոչ ոք չազատուէր կոտորածից, եթէ չը լինէին երկու թիւրք պաշտօնեաներ, որոնք թաղցրին քրիստոնեաներին իրանց տան և քարվանսարայի մէջ. «Երբ ես գրօնում էի քաղաքում, մի զփրախտ պատաւ ընկաւ իմ ոտները և սկսեց համբուրել նրանց, Խեղճ

կինը իր երկու որդիներին կորցրել էր կոտորածի ժամանակ և կարծում էր թէ ես, իբրեւ եւրոպացի, ուղարկուած եմ օգնելու նրա հայրենակիցներին»: Զմիւռնիայի անգլիական հիպատոսարանում ծառայող անգլիացի Ֆիտց-Մօրրիս Բիրեջիկում մեծ օգնութիւն է հասցրել հայերին. նա էր որ խնց թիւրքերից մզկիթ դարձրած հայոց եկեղեցին, չետոյ կանչեց Ջերին, ԽանՖատի, Հեջիբ գիւղերի հայ տանտաւերին (այդ գիւղերի հայերը հարկադրուած էին մահմեդականանալ) և թիւրք իշխանութիւնների ներկայութեամբ պաշտօնապէս պահանջեց որ նրանք չը համարձակուեն հայաւձել այն հայերին, որոնք նորից կը կամենան վերադառնալ իրանց եկեղեցու գիւղեր. Անէշում մենք տեսանք 80 հայ ընտանիքներ, այս գիւղը շրջակայ մահմեդական հարեաններից պահպանելու համար նշանակուած է մի զօրաբաժին: Սարափիկի է վշտի և տանջանքների այս թագաւորութիւնը, ցինիկական ոյժի, ֆրոյ անգթութեան թագաւորութիւնը, որ ոչնչացնում է մի ամբողջ ժողովուրդ. սարափիկի է և այն, որ անհնարին է բուժել այն մեծ դժբախտութիւնը, որ անպարտպան հայ ազգաբնակչութեան բաժին է դարձել:

Բիրեջիկից Այնթաբ իջնելիս, ճանապարհորդը եղել է մի քանի հայ գիւղերում: Էձայ ազգաբնակչութեան կրթութեան և ընդունակութիւնների միջին մակերևութը անհամեմատ բարձր է քան թիւրքերին: Հայ ծերունիների և պատուաւոր անձանց հետ հետաքրքրական է խօսակցելը. նրանց կարծիքով ֆրանսիացիները իրանց ուշադրութիւնը բացառապէս սիրիացիների վրայ են դարձրել, չեն հետաքրքրում հայերով: Անգլիացիներին նրանք մատամբ մեղադրում են այն բանի համար, որ սկզբում նրանք

խրախուսեցին հայերին պահանջներ անել թիւրք կառավարութիւնից, բայց կրփաբական ըրպէն թողեցին հայերին առանց որ և է օգնութեան: Սուլթանի բարեկամութիւնը Վիլհելմ կայսրի հետ հայերը անցողական բան են համարում: Ինչ վերաբերում է գերմանացիներին, նրանց զործունէութեան մասին խօսելը դեռ վաղ է:

Մինչև կոտորածները՝ Ալեքսանդր բարեկեցութիւնը աւելանում էր, չէր նայած թիւրքաց ըէթիմին: 3000 դազգահների վրայ (գլխաւորապէս հայերը) գործում էին բամբակէ կտորներ, որոնք տարածում էին ամբողջ ասիական թիւրքիայում: այժմ մնացել են միայն 800 դազգահներ: Ինչպէս Նիւսիայում, այնպէս էլ ամբողջ Հայաստանում վաճառականները չեն վստահանում շրջանառութեան մէջ մտնել իրանց զրամագլուխները: վարկը կորել է: Մօտ 18000 հայ այս տեղերում անգործ են մնացել և ապրում են եւրոպական բարեկեցութեան հասցրած միջոցներով: Ալեքսանդր կոտորածները տեղի ունեցան 1895 թուի նոյեմբերի 16-ին, մօտ 500 հայեր, զանազան դասանութիւններից, կոտորուեցան, հազար տներ թալանուեցան: «1895 թուի հոկտեմբերին ամբողջ թիւրքիայում տարածեցին լուրեր թէ Հայաստանի համար վաղուց խոստացուած ընթերցանքը վերջապէս կ'իրականանան: Ամեն տեղ հայերի մէջ այդ նորութիւնը պատճառեց ուրախութիւն, մանաւանդ աղմկալի էր ցոյցը Ալեքսանդրի հայերի մէջ: հայամերիկական կոլլէճում լուսավառութիւն եղաւ, աշակերտները աղաղակում էին: «Անցե՛ք՝ Վիկտորիա թագուհին»: Թիւրքերին շատ վատ թուաց հայկական ցոյցը: Սօֆիաները խորհրդակցութիւն ունեցան պատուաւոր մահմեդականների հետ և հետեանքն այն եղաւ, որ ֆանա-

տիկոս ազգաբնակութիւնը, կանոնաւոր զօրքերի մեծ մասի հետ, սկսեց կոտորածը՝ զինուորական փողի տուած նշանով: Շրջակայ բնակիչները և քրդերը շտապեցին հասնել կողպատի տեղը, բայց նրանց չեւ վաշտեցին, որովհետեւ քաղաքի բնակիչները և զօրքերը աւելի լաւ համարեցին որ իրանք օգուտուն աւարից: Այնուհետեւ պ. Վոստանսն ներկարագրում է Մարաշի կոտորածը և Ձէյթունի պաշարումը:

(Կը ճարուհակուի)

«Вѣстникъ Европы», օգոստոս: Այս գրքում վերջանում է պ. Մարկովի ճանապարհորդական նկարագրութիւնը («Ռուսաց Հայաստան»), որի մասին մենք արդէն խօսել ենք («Մուրճ» № 7): Էլմիածնից պ. Մարկովը գնացել է Ալեքսանդրապոլ, Անի և Կարս: այդտեղից է վերջանում նրա ճանապարհորդութիւնը: Խօսելով այժմ պ. Մարկովի գրուածքի ամբողջութեան մասին, մենք պարտաւոր ենք վկայել որ նա առհասարակ շատ հետաքրքրական գործ է, ընթերցանութեան մի գեղեցիկ նիւթ: Ամբողջ ժամանակ հեղինակը աչքի առաջ ունի գլխաւորապէս հայերին: Նկարագրում է նրանց նիստուկացը, մտնում է գիւղական հայ ընտանիքի մէջ: Մենք մեծ հետաքրքրութեամբ կարդացինք Շիրակի Բալլախտար հայ գիւղի մէջ, Քարութիւն Տէր-Մարթէոսեանի տանը ճանապարհորդի անցկացրած մի գիշերուայ նկարագրութիւնը: Նահապետական նիստուկացը, հայկական սիւլալիւ հիւրասիրութիւնը շատ գեղեցիկ տպաւորութիւն են թողել հեղինակի վրայ և նա վկայում է որ հայ գիւղացին ռուս գիւղացուց աւելի մաքրասէր է և կուլտուրական: Այս վկայութիւնը, ի հարկէ, ըստի հայ գիւղացիների վերաբերմամբ ճիշտ չէ: Բաւական է չիշել Զիրուիւլու գիւղը, որի նկա-

րազրութիւնը տուել է նոյն պ. Մարկովը:

Շատ զնահատելի է պ. Մարկովի վերաբերմունքը դէպի հայկական հնութիւնները: Իւրաքանչիւր վանք, եկեղեցի ճանապարհորդի մէջ վառում է հետաքրքրութիւն և երկար կանգ է առնում, նկարագրում է ներկայ դրութիւնը, իսկ եթէ հնար է, պատմում է նաև նրա անցելալը: Մենք արդէն ասել ենք որ պ. Մարկովը առանց ուշադրութեան չէ թողնում իր տեսած տեղերի պատմական անցելալը: Այդպիսով նա իր աշխատութեան մէջ գրել է համարեա հալոց ամբողջ պատմութիւնը, բայց, ի հարկէ, համառօտ կերպով: Եւ որ ամենից նշանաւորն է, այդ պատմական տեսութեան մէջ մենք չը նկատեցինք կոպիտ ու խոշոր սխալներ. մի հանգամանք, որ ցոյց է տալիս թէ ճանապարհորդը բարեխղճութեամբ ուսումնասիրել է մեր անցելալը, որքան այդ հնարատր է հայերէն չիմացող մի օտարականի համար: Առանձին հետաքրքրութեամբ կարդացում է մանաւանդ Անիի աւերակների նկարագրութիւնը: Դա պ. Մարկովի գործի ամենազեղչեցիկ կտորն է: Բազրատունեաց հուշակատր մայրաքաղաքից մնացած քարակոյտերն ու աւերակները պատկառանք և հիացում են ազդում ճանապարհորդին և նա աշխոյժ, համարեա բանաստեղծական ռոմով նկարագրում է աւերակների անցելալն ու ներկան: Դուք մի ամփոփ, ամբողջացրած հասկացողութիւն էք կազմում Անիի մասին. և պէտք է նկատենք, որ այդպիսի հասկացողութիւն ասանալու կամար մենք, հայերս, պիտի դիմենք օտար արդիւններին. մեր լեզուով գրուած մի լաւ նկարագրութիւն չը կայ: Եւ չէ էլ կարող լինել, քանի որ մենք անտարբերութեամբ և սոսկալի անհոգութեամբ ենք վերաբերում այդ գեղեցիկ աւե-

րակներին: Պ. Մարկովը դառն զանգատներ է անում. անխնամ և անտէր մնացած աւերակները հալում են արագ, որովհետև շրջակայ ազգաբնակչութիւնը այսօր էլ գողանում տանում է աւերակների քարերը իր շինութիւնների համար. միայն Վարսի երկաթուղու համար ո՞րքան քարեր են հանուել Անիից... Հեղինակը ամենայն իրաւունքով ասում է որ աւերակների պահպանութիւնը չ'է միաձնի պարտականութիւնն է և սակայն ոչինչ խնամք, ոչինչ ուշադրութիւն դէպի Բազրատունեաց մայրաքաղաքի չընաղ մնացորդները: Արժէր թարգմանել Անիի ամբողջ նկարագրութիւնը, որպէս զի քնած ուսնարներից հայը տեսնէր թէ ինչպէս է հետուից եկած մի օտար մարդ վերաբերում մեր պատմական յիշատակաւաններին և ի՞նչպէս է վերաբերում ինքը, հայը, իր կողքին փռուած, իր ռոնների տակ տրորուող այդ մընացորդներին:

Այլեքսանդրօպօլում պ. Մարկովը այցելել է հալոց եկեղեցին: Այստեղ նա գտնում է որ հալոց և չունաց եկեղեցական արարողութիւնների մեծ տարբերութիւններ չը կան: Նա պատմում է թէ ինչպէս հալոց եկեղեցին բաժանուեց և առանձին զիրք բռնեց, չիշում է ներսէս Շնորհալու արած ջանքերը եկեղեցիները միացնելու մասին և աւարտում է իր դիտողութիւնները այսպիսի խօսքերով: «Եւ ահա՛, այն կարծեցեալ իմաստունները, որոնք այնպիսի ինքնավստահութեամբ յանձն էին առել համարձակութիւն՝ ամենամարդ ներութիւններով վերլուծելու անտեսանելի և անիմանալի Աստուծու էութիւնը և Աստուծու մարդագման խորհուրդը, որ անմատչելի է մարդու հասկացողութեան, այն իմաստունները, որոնք անչուսալի կերպով մոլորում էին իրանց կազուխատական սովետա-

թիւնների լաբիրինթոսում, թույլ էին տալիս իրանց, ճշմարտութիւնը և սիրոյ ու խաղաղութեան անտարանական վարդապետութիւնը պահպանելու համար անիծել հրապարակով, հեռացնել իրանց հասարակութիւնից, աքսորել հայրենիքից, բանտերի մէջ փակել իրանց այն եղբայրակիցներին, որոնք այնպիսի անկեղծութեամբ և ինքնավստահութեամբ ձգտում էին հասկանալ անհասկանալին, որոշել անորոշելին, բայց զանազանում էին նրանցից մտքի մի որ և է անըմբռնելի մանրամասնութեամբ: Սա շատ ճիշտ նկատում է մի պատմական իրողութիւն է: Բայց հեղինակը չէ կարող ասել թէ միայն հայ եկեղեցականութեան էր յատուկ այդ-

պիսի վարմունքը: Ո՛չ: Այդ բանի մէջ հայերի ուսուցիչ են հանդիսացել կաթոլիկ, իսկն եկեղեցիները իրանց անէծքներով, հալածանքներով, տանջանքներով: Եթէ հեղինակի յալտնած միտքը մի ընդհանուր ճշմարտութիւն դարձած լինէր IV դարից, այն ժամանակ տեղի չէին ունենալ եկեղեցական ժողովները, որոնք շատ անգամ ծեծով ու բռնութիւններով էին ուզում քննել և հասկանալ երկնքի զործերը, այլ ամեն մէկին թույլ կը տրուէր պաշտել իր Աստուծուն այնպէս, ինչպէս ինքն է հասկանում:

Պարսի բերդի նկարագրութեամբ պ. Մարկովը վերջացնում է իր հետաքրքրական և ուշադրութեան արժանի ճանապարհորդութիւնը: